# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Նոյեմբերյան համայնքի հողամասերը աճուրդային կարգով օտարող հանձնաժողովը հայտարարում է համայնքային սեփականություն համարվող ներքոհիշյալ հողամասերի աճուրդ - վաճառք

| ԼՈՏ-ի անվանումը | Հողամասի հասցեն /գտնվելու վայրը/ | Ծածկագիրը | Մակերեսը` հա | Հողամասի նպատակային նշանակությունը | Հողամասի օգտագործման նպատակը | Հողամասի նկատմամբ սահմանափակումների /ներառյալ սերվիտուտների/ առկայությունը | Մեկնարկային գինը /դրամ/ | Քայլի չափ /դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Լոտ 1 | Նոյեմբերյան բն. Դովեղ, 7-րդ փ.,4/1 | 11-027-0007-0010 | 0.01 | բնակավայրերի | հասարակական կառուցապատման | չկան | 50,000 | 25,000 |
| Լոտ 2 | Նոյեմբերյան ք. Նոյեմբերյան | 11-004-0293-0019 | 0.15742 | գյուղատնտեսական | վարելահող | չկան | 260,000 | 130,000 |
| Լոտ 3 | Նոյեմբերյան ք.Նոյեմբերյան | 11-004-0293-0018 | 0.37421 | գյուղատնտեսական | վարելահող | չկան | 620,000 | 310,000 |
| Լոտ 4 | Նոյեմբերյան ք. Նոյեմբերյան | 11-004-0279-0364 | 0.02 | Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների | կապի | չկան | 300,000 | 150,000 |
| Լոտ 5 | Նոյեմբերյան ք. Նոյեմբերյան | 11-004-0271-0060 | 0.67424 | գյուղատնտեսական | վարելահող | չկան | 539,392 | 269,696 |
| Լոտ 6 | Նոյեմբերյան ք.Նոյեմբերյան | 11-004-0271-0004 | 0.36586 | գյուղատնտեսական | վարելահող | չկան | 292,688 | 146,344 |
| Լոտ 7 | Նոյեմբերյան գ. Բագրատաշեն, 4-րդ փ., 3-րդ փակ., 5 | 11-016-0064-0004 | 0.18058 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | չկան | 939,016 | 469,508 |
| Լոտ 8 | Նոյեմբերյան գ.Արճիս, 5-րդ փ.,29 | 11-015-0001-0046 | 0.32357 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | չկան | 711,854 | 355,927 |

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին, հողամասի ելակետային տվյալներին և հատակագծին կարող են ծանոթանալ Նոյեմբերյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության , գյուղատնտեսության և բնապահպանության բաժնում` ք. Նոյեմբերյան, Երևանյան 4, համայնքապետարանի շենք:

Աճուրդին մասնակցելու իրավունք ունեն` ՀՀ քաղաքացիներն ու իրավաբանական անձինք և ՀՀ օրենսդրությամբ սահմանված հողի սեփականության իրավունքի այլ սուբյեկտներ և հողօգտագործողներ: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է Նոյեմբերյանի համայնքապետարան ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ և Նոյեմբերյանի համայնքապետարանի 900395101109 հաշվարկային հաշվին աճուրդի մասնակցության վճարի` 30000 դրամի մուծման անդորրագիր:

Աճուրդի մասնակիցներն աճուրդի անցկացման օրը մուծում են նախավճար` տվյալ հողամասի մեկնարկային գնի 50 տոկոսի չափով: Եթե մասնակիցն աճուրդի արդյունքներով չի հաղթել, նախավճարն անմիջապես վերադարձվում է նրան: Եթե մասնակիցը հաղթել է, ապա նախավճարի գումարը ներառվում է վաճառքի գնի մեջ: Աճուրդի դրված հողամասի նվազագույն քայլի չափը հաշվարկվում է մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

Աճուրդում հաղթող է ճանաչվում ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը:

Աճուրդի պայմանների մանրամասներին ծանոթանալու և հայտ ներկայացնելու համար դիմել Նոյեմբերայնի համայնքի հողամասերը աճուրդային կարգով օտարող հանձնաժողովին` ք. Նոյեմբերյան Երևանյան 4, երկրորդ հարկ, սենյակ 15:

Աճուրդը կայանալու է 2023թ. հոկտեմբերի 2-ին ժամը 11.00-ին, ՀՀ Տավուշի մարզ, ք. Նոյեմբերյան Երևանյան 4, երկրորդ հարկ, սենյակ 15 :